

8962



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«21» 10 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 227 - 24

Նախաձեռնող՝

«Դիջիդաթա» ՓԲԸ

Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Գագարին գյուղ, գործարանային փ., 1 պահեստ

Գործունեությունը՝

Սևան համայնքի Գագարին բնակավայրի
ֆոտոէլեկտրական կայանի կառուցման
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 227 - 24

«21» հոկտեմբերի 2024թ.

Սևան համայնքի Գագարին բնակավայրի վարչական տարածքում արևային
ֆոտոէլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվություն

Նախաձեռնող՝

«Դիջիդաթա» ՓԲԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
/Բ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
Գագարին բնակավայր

Ներածական մաս. Նախատեսվում է կառուցել 5.307 ՄՎտ դրվածքային հզորությամբ ֆոտոէլեկտրակայան կայան Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրի տարածքում: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է մոտակա բնակավայրի բնակելի տներից մոտ 150 մ, Սևան քաղաքից՝ 7 կմ հեռավորության վրա:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (<Օ-110-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ) ենթակետի, հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի: Գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի կողմից 2023 թվականի հունիսի 21-ին տրված N59 ճարտարապետահատակագծային առաջադրանքն ու 05-004-0302-0025 կադաստրային ծածկագրով N 31052023-05-0039 անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը:



Նախատեսվում է կառուցել 5.307 ՄՎտ դրվածքային հզորությամբ ֆոտովոլային կայան 6.398 հա տարածքում, ծովի մակերևույթից 1891մ բարձրության վրա: Կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 9477 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 560 Վտ առավելագույն հզորությամբ, որոնք 20 հատ 250կՎտ ելքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից մալուխներով միանում են ենթակայանի 0.8կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին: Ընտրվել են JAM72D30-560/LB ֆիրմային արտադրության 21.2% ՕԳԳ-ով, IP 68 տիպի, 560Վտ առավելագույն հզորությամբ բազմաբյուրեղ 2333x1134x30մմ չափերով ֆոտովոլտային մոդուլներ: Փոխակերպիչները նախատեսված են Huawei արտադրության, SOLIS-250K-EHV-5G մոդելի 250կՎտ ելքային հզորության, ցանցային տեսակի, 14 MPPT (Maximal Power Point Tracker) 28 մուտքերով: Արևային էլեկտրակայանի տեղադրման համար նախատեսվում է կառուցել սև մետաղե կոնստրուկցիաներով հարթակներ, քառակուսի խողովակաձող՝ բետոնե հիմքերով, ամրացված հողի վրա: Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվում են հորիզոնի նկատմամբ 26° թեքվածությամբ: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35 մ/վ քամու արագության համար:

250 կՎտ հզորությամբ փոխակերպիչներից 16-ն ունեն 18-ական և 4-ը՝ 19-ական հաստատուն հոսանքի մուտք, որոնց միացվում են 26 և 27 հատ հաջորդաբար միացված ֆոտովոլտային պանելներով: Փոխակերպիչի հաստատուն հոսանքի "+" և "-" շղթաների մուտքերը պաշտպանված կլինեն 15Ա ապահովիչներով: Մալուխները նախատեսվում է խրամուղում տեղադրել գետնից 0.7 մ խորության վրա:

Արևային ֆոտովոլտային կայանը 10 կՎ ցանցին միանում է 6300կՎԱ/10/0.8 կՎ տրանսֆորմատորի միջոցով: Հողանցման դիմադրությունը չպետք է գերազանցի 4 Օհմ-ը: Շինանյութերը մատակարարվելու են միանգամից օգտագործման նպատակով, տարածքում պահեստավորում չի նախատեսվում:

Գործունեության իրականացման շինարարության փուլում (կարճաժամկետ հողային աշխատանքների) փոշենստեցման գործընթացի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է համայնքից՝ վճարային հիմունքներով: Խմելու և կենցաղային կարիքների համար կիրառվելու է բաքերով մատակարարվող և ստերիլ ջրային ապարատներով խմելու ջուր:

Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտը նախատեսվում է անմիջապես դարսել լայնակույտերով: Լիցենզիայի ավարտից հետո տարածքն ամբողջությամբ կվերականգնվի, կվերացվեն բոլոր մետաղական և բետոնյա կառույցները, կիրականացվի հողի բերրի շերտի հետլիցք և ցանքս՝ տարածքին բնորոշ բուսատեսակներով:

Հողաբուսաշերտի հզորությունը կազմում է 20 սմ:

Շինարարական աղբը նախատեսվում է տեղափոխել համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Վտանգավոր թափոնները հավաքվելու և պահվելու են նախատեսվող գործունեության տարածքում առանձնացված վայրում, ապա տրամադրվելու են լիցենզավորված կազմակերպությանը: Կոմունալ կենցաղային թափոնները կուտակվելու են աղբամանում, որից հետո համայնքային կոմունալ ծառայությունը կիրականացնի թափոնի տարածքից հեռացում դեպի համայնքային աղբատեղի: Կառուցապատման փուլում կենցաղային աղբը կկազմի 875 կգ, շահագործման փուլում՝ 2.160 կգ/տ:



Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության՝ գործունեության իրականացման տարածքում՝ Կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չեն հայտնաբերվել, տարածքը տեղակայված չէ հատուկ պահպանվող գոտու տարածքներում: Տարածքում պատմության, բնության հուշարձաններ չկան:

Ռեկուլտիվացիան նախատեսվում է իրականացնել 6.1 հա տարածքում, ինչի համար հատկացվելու է 7 500 000 ՀՀ դրամ գումար:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-մեքենաների լվացումը, լիցքավորումը և այլ ծառայությունների մատուցումը կազմակերպել համապատասխան սպասարկման կենտրոններում,

-շինարարության և շահագործման փուլերում, նախատեսվող գործունեությունից առաջացած մետաղի ջարդոնը հնարավոր է վաճառել դրա վերամշակմամբ զբաղվող հատուկ ընկերություններին,

-շինարարության ընթացքում աղմուկի մակարդակի նվազեցման նպատակով բեռնատարներն աշխատելու են միայն ցերեկային ժամերին, կամ օգտագործվելու են միայն ցածր ձայն ունեցող սարքավորումներ,

- տարածքում թափոնների պահման տեղամասը և հարակից տարածքը ցանկապատվելու են,

-օգտագործված յուղերն ու քսայուղերը հավաքվելու են առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման նպատակով կամ տրամադրվելու են երկրորդային վերամշակում իրականացնող ընկերությանը պայմանագրային հիմունքներով,

-հնամաշ դետալներն ու մասերը հավաքվելու և հանձնվելու են որպես մետաղական ջարդոն վերամշակող ընկերությանը՝ պայմանագրային հիմունքներով,

-օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչները պարտադիր պետք է կարգավորված լինեն աղմուկի նվազեցման՝ շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով,

-աշխատանքների ընթացքում բացառվելու է տեխնիկատրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից դուրս,

- Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացվելու է պահպանվող գոտի: Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխսման ժամանակամիջոցում դադարեցվելու են տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

-մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ՝ ամսական մեկ անգամ,

-աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ ամիսը մեկ հաճախականությամբ,

-փոշեզոյացումը նվազեցնելու նպատակով շինարարության փուլում նախատեսվում է իրականացնել գործունեության իրականացման տարածքի ջրցան,

-շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի շարժիչների ստուգման աշխատանքներ՝ ամսական մեկ անգամ,

-սորուն նյութերի պահեստների հատակների վիճակի ստուգման աշխատանքներ՝ շաբաթական մեկ անգամ,



- կենսաբազմազանության ուսումնասիրություն շինարարության փուլում՝ եռամսյակային կտրվածքով:

Մշտադիտարկումների և բնապահպանական ազդեցությունների կանխարգելման համար նախատեսված գումարը կազմում է 1 100 000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում արևային ֆոտոէլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Գեղարքունիքի մարզպետարանը: Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել լրամշակված հաշվետվությունում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել՝ ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

- Արևային կայանի կառուցման ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:

- Շրջակա միջավայրի, ինչպես նաև մարդու առողջության, անվտանգության և տեխնիկական անվտանգության Հայաստանի Հանրապետությունում գործող նորմերի պահանջները:

- Արևային կայանի կառուցումն իրականացնել «Էլեկտրահաղորդման գծերի անվտանգության գոտիների կանոնները հաստատելու մասին» Կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի №523-Ն որոշման համաձայն:

- Անհրաժեշտ է խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարելու դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական նորմերն ապահովելու նպատակով:

- Շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է իրականացնել տարածքի ցանկապատում:

- Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերի լվացում:

- Աշխատանքների ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքապետարանի հետ համաձայնեցված:

- Գործունեության իրականացման ընթացքում ապահովել աղմուկի մակարդակի վերահսկում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, երեկոյան ու գիշերային ժամերին դադարեցնել աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացումը:



ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Դիջիդաթա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Սևան համայնքի Գագարին բնակավայրի վարչական տարածքում արևային ֆոտոէլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գոհար Մինասյան